ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

N 113-Ա　　　　　　　　ք.Արտաշատ

16 մարտի 2026թ.

## ԱԶԱՏՈՒՀԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՀՈՎԻՏԻ ՎԼԱԴԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 629 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2026 թվականի մարտի 17-ից Ազատուհի Ասլանյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրահովիտի Վլադիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով:
2. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրահովիտի Վլադիկ Աբրահամյանի անվան միջնակարգ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ազատուհի Ասլանյանի աշխատանքները գնահատելու նպատակով՝ փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Գրիգորյանին:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝　Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826　Ս. ԹԵՎՈՆՅԱՆ